

րեն Թորգոմեան Ընկ.եան համանուն վրձրն.ի. անոի Տիմոթեոս՝ մինչև 1879 Յուլիս : Կայն տարին Օգոստ. 5 ին քաննայ կը ձեռնադրուի Հասքեոյ՝ քարոզիչ Գրիգոր Սրբազանէ, ծննդավայրին եկեղեցոյն համար ուր կը պաշտօնավարէ 7 տարի : Յետոյ Իգմիրեան Ս.ի կ'ընկերանայ, անոր՝ եգիպտոսի առաջնորդ մեկնումին առքիս, 12 Մարտ 1886 ին : 3 տարի կը մնայ Աղեքսանդրիա, ուրկէ —



Տ. ՂԵՒՈՂԻ ՔԶ. ՓԱՓԱԶԵԱՆ

Կրօն. Ժողովի որոշմամբ — կ'անցնի Կալաց, և 17 տարի անընդհատ կը պաշտօնավարէ քաղքին Ս. Ած.ածին ժամը : 1906 ի ամբան՝ կը հաստատուի Թուլչա ուր կը բնակի, ներկայիս մեջ անպաշտօն, Հոգաբարձութեան քմայքով տեղոյն ժամը փակ մնացած ըլլալուն : — Երուսաղէմ ուսանող եղած ատեն՝ տիպի ու տառի սաստիկ սեր ունենալով, պատանին Յակոբ տովորոքին ունէր ատեպ այցելել Ս. Արոսի տպարանը : 1874 ին (տակաւին աշխարհական) Ե. Տնտեսանէ բաւական մը գիր գնած է և գրաշարութեան վարժուած, լոկ ինքնօգնութեամբ : Այնուհետեւ, Յ. Յ. Պարոնեան երբ իր Խիկար երգի-ժարերը պահ մը Էտիրնէ փոխադրեց, Աստուծոյ Տան ծառայող այս պաշտօնեան եղաւ անոր բերրը շարող (1885-6), եկեղեցոյն շրջափակին մեկ խոցը : Թերը տպագրուած է տեղոյն կառավարական մամուլով : Հոն է որ Տ. Ղեոնդ տպած է նաեւ հայատառ տանկեմար **Մ'օր մը Բաւած վիճակեր** կարոյիկ-Պուլկարաց վանքին մամուլով, քեւ այդ գիր-իշխատակուած : — Քաննայտական պաշտօնով ԱՂԵՔԱՆԴՐՈՍ

քին վրայ տպարանի անուն չէ իշխատակուած : — Քաննայտական պաշտօնով ԱՂԵՔԱՆԴՐՈՍ անցնելուն, իր տառերուն քանակը շառցուցած է և 1888 ին հիմնած **Նեղոս** շարաբերքը՝ Անտոն Ռշտունիի աշխատակցութեամբ : Իր գրաշարութիւնն նորէն ժամին մեջ կ'ընէր, և բերրը կը տպէր Ֆ. Միգրանի անուն Հրեայի մը տպարանը : Հոն բաց ի «Նեղոս»-էն՝ տպագրած է նաեւ զանազան կանոնագրեր և **Դասապարտեայն Ծուռան** ազգային վեպը (վերջերս Կ. Պոլիս Բ. տպագրութեան արժանացած), որուն մեջ «Տպագրողն առ սիրելի ազգայինս իր» խորագրով գեկոյց մը ունի ինք : — Իսկ ԿԱՂԱՅ (Ռումանիա) հաստատուելուն, Փափագեան Հայր հետամուտ եղած է տպարանական կազմածքը ձօնացունելու՝ Հայերէն և Ռումաներէն տառեր, նաեւ ձեռքի հին մամուլ մը հայքայրելով և 1891 էն սկսեալ լոյս ընծայելով **Նտեսեայները** : — 1891 **Կանոնագիր Լուսատուչեան Ստանուց Ընկ.եան Թուլչայի** (երկկեղեցեան), 1895-9 **Հայկական Կարեցոյց** պատկերազարդ (հայ-ռոմ.) իր խմբագրութեամբ, Բրօֆ.



Տ. ՂԵՒՈՂԻ ՔԱԶԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԻՆ ՀԻՆ ՄԱՐԴԱԳԻՐԵՐԸՆ ՆՄՈՅՆԵՐ

Լուսիկ Սրնագաշեանի բարգմանութեամբ և աշակցութեամբ Վանքամ Մամիկոնեանի՝ փաստարան ի Ֆօքչան : Վերջին տարեցոյցին հետ, իբր յաւելուած, ձրի տուած է իր ընթերցողներուն դեպքերու **Նկարագիր** մըն ալ : 1896 **Նամակահին** և 1898 **Պատմութիւն Կրիստ. Եկեղեցոյ** (Մեքիսեղեկ եպոսկ.ի) : 1895 **Ռումանացոց Գեղեկան և ապագան** (Պետր. քննչ. Մամիկոնեանի) : 1902 **Հրահանգիչ վեպեր** : — Իսկ 1902-10, ստուարարուղի վրայ տպած է միայն ռումաներէն Օրացոյցներ : — Տ. Ղեոնդ քեւ անձնական մամուլն ունէր, բայց ռո-